զմիւս եւ զանուանին Բարձր-բերդ իմանայ, որոյ եւ մերձաւորութիւն աներկբայ է՝ ըստ Տեղագրութեանս:

149. Բ. Սահմանք Բարձրբերդոյ.– Նորընծայ յիշատակարանք հին մատենից՝ յայտնեցին մեզ աստանօր զանծանօթն ’ի ժամանակի Տեղագրութեանս՝ վանս մի, եւ գետ մի ախորժալուր հայկական անուամբք. վերոյիշեալ վարդապետն այն Մարտիրոս աշակերտ Գէորգեայ Սկեւռացւոյ, ’ի միում ’ի յիշատակաց Աստուածաշունչ մատենին՝ զորոյ մասն մի ընդօրինակէր ’ի Գոներ, ասէ եւ վասն այլոյ մասին, «Գրեցաւ սա ’ի թուականիս ՉԾԳ (1304), յամսեանն յուլիս, յերկիրս Կիլիկիոյ, մերձ ’ի բերդս Բարձր, յԱնապատս Խաչատրոյ, ’ի վերայ գետոյս Շղրկայ, ’ի քարանձաւ եւ ’ի նեղ տեղիս»: Նկարագիր բնութեան տեղեացն՝ ’ի դէպ գայ եւ մերձաւորութեան Անդրիասանց ուխտի, որ եւ հետեւի ’ի Տեղագրութեանս:

151. Լեւոնբերդ.– Երկբայէի ընդ նոյն կամ որիշն լինել ’ի Լեւոնկլայէ. արդ համարիմ զսա որիշ, եւ մերձ ’ի Սիս, շինեալ ’ի Մեծէն Լեւոնէ, ըստ վկայութեան Ժամանակագրին, եթէ «Շինեաց եւ բազում բերդս եւ դղեակս, որոց մին է ըստ անուան իւրոյ. կոչի Լեւոնբերդ. զոր այժմ այլազգիք Լմբերթ կոչեն, որ շէն՝ այլ ամայի մնացեալ (է). եւ եկեղեցին Ս. Վասլի անուամբն, որ նա եւս աւերակ է»: Աւանդէ նոյն ժամանակագիր՝ զի եւ կէս ԺԶ դարու՝ գէթ ըստ մասին շէն էր տեղին եւ ամարանոյ Մայսենց տոհմի Սսեցւոյ, յորմէ էր Թորոս Ա կաթողիկոս. այն՝ որ արհամարհութիւն կրեալ, առանձնացաւ ’ի բերդն յայն. «եւ կեցաւ անդ եւ մեռաւ, եւ թաղեցաւ անդ ’ի Ս. Յովհաննէսայ դուրսն, ’ի հարաւային որմին տակն. եւ ’ի ՌԲ (1553) թուին որ նորոգեցին զԼեւոնբերդին զեկեղեցին, նա զգերեզմանն ’ի ներս առին»:

151. Բ. Խորին անապատ.– Զդիրս Անապատիս ստուգէ չափաւորապէս՝ ժամանակագիրն Կիլիկիոյ, այլ սխալէ զսկիզբն եւ զսկզբնաւորողն, զհետ երթեալ սխալման Յայսմաւուրաց ոմանց. քանզի ասեն վասն Ս. Գերմանոսի պատրիարքի Կ. Պոլսի՝ յառաջագոյն եղեալ մետրապոլիտ Կիւլիկիոյ, փոխանակ ընթեռնլոյ Կիւզիկիոյ, եւ շինեալ անդ զԽորին անապատ, փոխանակ Խորայի, որպէս գրեն ստոյգ պատմիչք